

Զեկուլցագիր

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԸ
ԿԱՐԴԱԼՈՒ ԵՎ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ
ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿՈՐՈՒՄԸ
ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Ա.Զեխովի անվան
55 դպրոցի ուսուցիչ՝
Դանիելյան Լ.

Այսօր հանրակրթությունն իր առջև դրել է բազմաթիվ խնդիրներ, որոնք իրենց անհապաղ լուծմանն են սպասում: Կարծում են, դրանցից ամենագլխավորը չափորոշչափեն կրթության ապահովումն է:

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՐՈՑՆ ԱՎԱՐՏՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

3.1. Տարրական դպրոցի շրջանավարտի նկարագիրը թելադրում է նրան ներկայացվող ընդհանրական որակական պահանջները, որոնք սահմանվում են տարրական կրթության հիմնական նպատակներին համապատասխան:

Տարրական կրթության հիմնական նպատակներն են տարրական դպրոցի սովորողի՝

ա/ մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների զարգացումը,

բ/ լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության աշխարհայացքային պատկերացումների հիմքերի ստեղծումը,

գ/ աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումը,

դ/ բարեկիրթ վարքի և կայուն արժեհամակարգի հիմքերի ձևավորումը,

ե/ բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական, էկոլոգիական և ֆիզիկական դաստիարակությունը և առողջ ապրելակերպի հիմքերի արմատավորումը,

զ/ միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող կրթմանկարգակի ապահովումը:

3.2. Հանրակրթության չափորոշիչի ներքոնշյալ որակական պահանջները ընդհանրական են պարտադիր կրթության տարրական մակարդակ ապահովող հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին՝ տարրական աստիճանի համար և կազմում են տարրական հանրակրթական երեք հիմնական ծրագրերի (ընդհանուր, մասնագիտացված և հատուկ) բովանդակության պարտադիր նվազագույն միջուկը, ինչպես նաև չափորոշում են դրանց առավելագույն ծավալը:

3.3. Տարրական կրթության հանրակրթական ծրագրերի յուրացման ժամկետը հիմնականում 4 տարի է, և ուսումնառության արդյունքներն ամփոփվում են կրթական աստիճանի ավարտին, սակայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ծրագրերի յուրացման ժամկետը ըստ բժշկահոգեբանամանկավարժական մասնագիտացված կառույցների երաշխավորության, կարող է ավելացվել՝ հաշվի առնելով նրանց անհատական հնարավորությունները, հոգեկան և ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները:

6

3.4. Հանրակրթության պետական չափորոշիչն իր բոլոր բաղադրիչներով նպատակաուղղված է շրջանավարտի անձնային որակների ձևավորմանը: Ակնկալվում է, որ հետևողական և նպատակասլաց ջանքերի արդյունքում տարրական դպրոցի շրջանավարտը պետք է՝

1. Կարողանա հաղորդակցվել հայերեն լեզվով.

1) հաղորդակցվել մեծահասակների, հասակակիցների և փոքրերի հետ,

2) ընկալի ուրշների խոսքը և կարողանա արտահայտել սեփական մտքերը.

3) կարդա և հասկանա պարզ գրավոր տեքստեր.

4) գրավոր շարադրի պարզ տեքստեր.

5) կատարի պարզ գրավոր հանձնարարություններ.

2. Կարողանա հաղորդակցվել օտար լեզվով.

1) լինի գրաճանաչ.

2) առօրյա իրավիճակներում պատասխանի պարզ հարցերի, հաղորդակցվի ծանոթ հարցերի շուրջ.

3. Ունենա մաթեմատիկական գրագիտություն և տարրական կարողություններ բնագիտության ոլորտում.

1) կիրառի տարրական մաթեմատիկական գործողությունները (գումարում, հանում, բազմապատկում, բաժանում) առօրյա պարզ խնդիրներում.

2) հասկանա և կիրառի մաթեմատիկական սիմվոլներ.

3) տրամաբանական եզրակացություններ անի պատճառահետևանքային կապերի վերաբերյալ.

4) ճանաչի երկրաչափական պատկերներ և մարմիններ.

- 5) տարրական պատկերացում ունենա բնության և շրջակա միջավայրի մասին.
- 6) գիտակցի մարդու կողմից շրջակա միջավայրը բարելավելու հնարավորությունները և պատասխանատվությունը
- 7) ճանաչի և սիրի իր բնակավայրը, հայրենիքը, հայրենի բնությունը, խնամքով վերաբերվի շրջակայքին.
- 8) ունենա թվայնացված տեխնոլոգիաների օգտագործման տարրական կարողություններ.
- 9) կարողանա օգտվել ժամանակակից կենցաղային և թվայնացված տեխնիկական միջոցներից (հեռուստացույց, հետախոս և այլն)
- 10) ունենա համակարգչային տարրական գրագիտություն.

4. Կարողանա սովորել և սովորեցնել.

- 1) ունակ լինի ինքնակազմակերպվելու և ինքնուրույն գործունեության.
- 2) կարողանա ճիշտ գնահատել իր հնարավորությունները
- 3) տիրապետի սովորելու հիմնական հմտություններին, ունենա սովորելու կամք և վստահություն սեփական ուժերի հանդեպ.
- 4) դրսևորի աշխարհաճանաչողության ակտիվ և առողջ հետաքրքրասիրություն,
- 5. Ունենա հասարակական և քաղաքացիական կարողություններ.
- 1) գիտակցի և արժևորի իր ազգային ինքնությունը.
- 2) հարգի և ընդունի ընտանեկան և հասարակական կյանքի արժեքները.
- 3) ունենա աղեկվատ ինքնագնահատական
- 4) ցուցաբերի հարգալից վերաբերմունք շրջապատի նկատմամբ, հանդուրժողականություն և զսպված վարք.

7

- 5) ճանաչի և արժևորի իր հայրենիքը, Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները.
- 6) արժևորի առողջ ապրելակերպը, իմանա անվտանգ կենսագործունեության կանոնները և դրանք կիրառի կյանքում.
- 7) իմանա իր իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատու լինի իր արարքների համար.
- 8) գիտակցի իր պատկանելությունը համայնքին.

6. Ունենա տարրական կենցաղային, աշխատանքային հմտություններ, լինի նախաձեռնող և գործունյա,

- 1) կարողանա աշխատել համագործակցված, լինել թիմի անդամ.
- 2) կարողանա պլանավորել գործերը և իրականացնել դրանք.
- 3) լինի նախաձեռնող.
- 7. Ունենա գեղագիտական ընկալում և ստեղծագործական տարրական կարողություններ.
- 1) զբաղվի անհատական կամ խմբային գեղարվեստական գործունեությամբ՝ նկարել, ծեփակերտել, երգել, նվագել, հանդես գալ բեմադրություններում.
- 2) նկարչական միջոցներով, երևակայական պատկերներով արտահայտի գաղափարներ.
- 3) ունենա և արտահայտի սեփական կարծիքը արվեստի ստեղծագործությունների վերաբերյալ.
- 4) հաճույք ստանա ստեղծագործական աշխատանքից և հաճույքով դրանք ցուցադրի.

8. Կարևորի մարմնակրթության և սպորտի դերն ու նշանակությունը.

- 1) կարողանա պահպանել անձնական հիգիենայի կանոնները՝ դրսևորելով սեփական մարմինը խնամելու կամք
- 2) զբաղվի որևէ անհատական կամ խաղային մարզաձևով.
- 3) մրցակիցների նկատմամբ լինի ազնիվ, հարգալից և հանդուրժող:

Այս պարագայում գիտելիքների յուրացումն ինքնանպատակ գործընթաց չէ. առավել կարևորվում են կարողությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը:

Տեղեկատվական հասարակությունում առաջնահերթ է յուրաքանչյուր անհատի ինքնակրթության, ինքնավերահսկման կարողություններին տիրապետող, տարբեր իրադրություններում ճիշտ կողմնորոշվող անձի ձևավորումը: Այդ իսկ պատճառով որևէ գործունեություն ծավալելիս խիստ կարևոր է ինքնուրույնության դրսևրումը:

Տարրական դպրոցում վերոհիշյալ կարողությունները, կարելի է ասել, ոչ թե զարգացվում, այլ ձևավորվում են, և այդ գործընթացը պայմանավորում է սովորողի հետագա կրթությունը: Այստեղ առկա է հիմնախնդիր՝ կապված ուսումնական առաջադրանքների կատարման հետ. այն է՝ ինչո՞ւ են երեխաները թերանում կամ դժվարանում դասագրքում տրված առաջադրանքներն ինքնուրույն կարդալու-հասկանալու և կատարելու հարցում: Բնական է, որ այս հարցը միանշանակ պատասխան չի կարող ունենալ: Սակայն առաջարկում են քննարկել մի շարք հնարավոր դեպքեր, որոնց վերլուծությունն օգտակար կարող է լինել սովորողների ինքնուրույնության կայացման խնդրով շահագրգիռ դասվարներին: Ցանկացած առաջադրանքի կատարում սկսվում է առաջադրանքի պահանջի ընթերցումից: Այն կարդալու և հասկանալու առաջին նախապայմանը տառաձանաչությունն է, իսկ պահանջի ընթերցումը հետապնդում է երկու նպատակ.

- հասկանալ՝ ինչ է պահանջվում առաջադրանքը կատարողից,
- հասկանալուց հետո կատարել առաջադրանքը:

«Տարրական դասարաններում ուսուցումն իրականացվում է նաև ընթերցանության միջոցով: Եթե երեխան լավ է տիրապետում ընթերցանության տեխնիկային, բանավոր և գրավոր խոսքին, սիրում է գիրքը, ապա նա կարող է ուսումնական տարբեր փուլերում հաջողությամբ յուրացնել ծրագրային նյութը»:

Հասկանալով կարդալու համար աշակերտը պետք է տիրապետի կարդացածը վերլուծելու կարողությանը: Վերլուծելը թերևս այն կարևոր և բարդ կարողություններից մեկն է, որը և փորձում են ձևավորել տարրական դպրոցում: Այդ կարողության ձևավորման համար հիմնական դաշտ են ծառայում մաթեմատիկան և քերականությունը:

«Ամեն ինչ բառացի հասկանալու մանկական մտածողության հատկությունը, իրադրությունից վեր լինելու և դրա վերացական կամ փոխաբերական իմաստը հասկանալու անկարողությունը, երեխայի մտածողության հիմնական առանձնահատկություններից մեկն է, որը վառ արտահայտվում է այնպիսի վերացական դպրոցական առարկաների ուսումնասիրման ժամանակ, ինչպիսիք են՝ մաթեմատիկան և քերականությունը»: Հաշվի առնելով այս հանգամանքը, այդուհանդերձ, հնարավոր է կարդալու որակի

բարձրացման հաշվին զարգացնել վերլուծական ունակությունը: Իսկ կարդալու հմտությունը զարգանում է ամեն պահի, երբ երեխան փորձում է ինչ-որ բան կարդալ մտքում և հասկանալ: Նա փորձում է կարդացածն ինչ-որ մեկին բացատրել, կամ պարզապես վերարտադրել դրա բովանդակությունը, կարդացածի շուրջ հարցեր տալ և այլն: Եվ որքան նա այդ գործողությունն երը շատ է կատարում, այնքան նրա կարդալու որակական հատկանիշները բարձրանում են: Վերոնշյալ գործողություններին ուղղորդված ընթացք չտալը կամ նպատակային քայլեր չմշակելն ի վերջո հանգեցնում են նրան, որ սովորողներից ոմանք տիրապետում են կարդալու-հասկանալու հմտությանը, իսկ շատերը՝ լրջորեն թերանում են այդ հարցում: Ակնհայտ է, որ թերացումներն ավելի հստակ են երևում, երբ երեխաները մաթեմատիկայից կամ մայրենի լեզվից ինչ-որ առաջադրանքներ կատարում են ինքնուրույն: Պարտադիր է մի պայման. ուսուցիչը պետք է միշտ ուշադրություն դարձնի առաջադրանքի պահանջը սովորողների կողմից ինքնուրույն ընթերցելու որակի բարձրացմանը: Երբ նա պարբերաբար մոռանում է ուշադրություն դարձնել այդ որակի զարգացման վրա, արդյունքում ստանում է այն, ինչ այսօր կա մեր կյանքում:

Պետք է սովորեցնել երեխաներին՝

1. ուշադիր կարդալ պահանջը,
2. հասկանալ, թե ինչ է պահանջվում,
3. ուսումնասիրել առաջադրանքը,
4. կատարել այն:

Պահանջի ընթերցման կարողություն ձևավորելու համար կարելի է դիմել տարբեր մանկավարժական հնարների, սակայն ցանկացած գործի հաջողության գրավականը հետևողականությունն ու շարունակականությունն է այնքան ժամանակ, քանի դեռ չի ձևավորվել տվյալ կարողությունը:

Ուսուցիչները սովորություն ունեն երեխաների փոխարեն առաջադրանքի պահանջը բարձրաձայն կարդալ: Սա առաջին կոպիտ սխալն է, որը նրանց կողմից պարբերաբար թույլ է տրվում: Երեխաների միջավայրում ձևավորվում է այն կարծիքը, թե պահանջները շարադրված են նրա համար, որ դրանք իրենց համար կարդան ուսուցիչները, իսկ իրենք միայն կատարեն առաջադրանքը: Կարելի է ասել, որ առանց ուսուցչի աջակցության երեխաները հազվադեպ են ինքնուրույն հասկանում պահանջը: Այս խնդիրը հիմա շատ արդիական է, քանի որ ըստ նոր գնահատման համակարգի՝ երեխան պարբերաբար պետք է գրի թեմատիկ և կիսամյակային գրավոր աշխատանքներ, որոնցում դրսևորվելու են ոչ միայն յուրացված գիտելիքները, այլև աշխատանքը լրիվ ինքնուրույն կատարելու

կարողությունները: Այսինքն՝ ինքնուրույն կարդալու և հասկանալու կարողությունը ոչ միայն արժեք է, այլև անհրաժեշտություն՝ բարձր ուսումնական առաջադիմություն ցուցաբերելու առումով: Ի վերջո, այս տեղեկատվական դարում ցանկալի է, որ երեխան կարդալու-հասկանալու միջոցով կարողանա կարևորը անկարևորից տարբերել, վերլուծել ընթերցածը և ճիշտ եզրահանգումներ կատարել:

Որպեսզի երեխան սովորություն ունենա ամեն անգամ ուշադիր կարդալ առաջադրանքի պահանջը, անհրաժեշտ է, որ այն միշտ ինքը կարդա: